ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

« 07» «սեպտեմբեր» 2015թ N 71

ք. Եղեգնաձոր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ԵՎ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 3-րդ մասով, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ -728 հրամանագրի 1.6-րդ կետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N1974-Ն որոշմամբ հաստատված N1 հավելվածի 30-րդ կետով և հիմք ընդունելով ՀՀ տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարի 2015 թվականի օգոստոսի 31-ի N 1/32.2/12506-15 հանձնարարականը.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ ԵՄ՝

1. ՀՀ Վայոց ձորի մարզպետի 2010 թվականի փետրվարի 23-ի N 12 որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի զարգացման ծրագրերի և վերլուծության բաժնի կանոնադրության « բաժնի գործառույթները » գլխում ավելացնել նոր է [1]) կետ հետևյալ բովանդակությամբ՝

«է[1]) Ցուցաբերում է աջակցություն համայնքների ղեկավարներին համայնքային զարգացման ծրագրերի կազմման գործընթացում»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ